ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

10 հունիսի 2019 թվականի թիվ 188-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՑ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, 7-րդ և 12-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2015վականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման մասին որոշման պահանջներով,

կարգադրում եմ

ՀՀ Տավուշի մարզպետարանում տեղեկությունների շրջանառության եվ ստորաբաժանումներից ներքին տեղեկատվական հոսքերի արդյունավետ ապահովման համակարգման համար մարզպետարանի՝ որպես տարածքային կառավարման օղակ, և մարզպետի գործունեության, մարզում կատարվող կարևոր իրադարձությունների, իրականացվող ծրագրերի լուսաբանումը պատշաճ կատարելու և հանրային իրազեկման կարևորագույն գործառնություն իրականացնելու նպատակով.

1. Տավուշի մարզպետարանի վարչությունների պետերին և բաժինների վարիչներին՝

1) ներկայացնել տեղեկատվություն համապատասխան ոլորտում իրականացվող ծրագրերի, միջոցառումների մասին /անելիքներն ու սպասելիք, նաև՝ անակնկալ իրադարձությունները՝ շաբաթվա, ամսվա և տարվա կտրվածքով/,

2) ներկայացնել համապատասխան ոլորտի զարգացման տեսլականը և այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերը, համապատասխան ոլորտում առկա միջազգային փորձը, քաղաք դասերը, զարգացմանը նպաստող ծրագրերի հաջողված օրինակները, աշխատանքային փորձի

ընթացքում հանդիպած կամ գործընկերներից ավանդաբար փոխանցված, ոլորտի հետ կապված դեպքերը, իրադարձությունները, պատմությունները, նաև՝ զվարճալի ու զավեշտալի:

2. Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետին՝ առաջարկել համայնքների ղեկավարներին՝ ներկայացնել համայնքների առաջնահերթ խնդիրները, ծրագրերը, համայնքների կյանքում կարևորված օրերն ու իրադարձությունները, պատմությունները, հետաքրքիր մարդկանց, պատմամշակութային հուշարձանները, վայրերը, նաև՝ զվարճալի ու զավեշտալի դեպքերը, առաջարկել լուսաբանման թեմաներ, իսկ լրատվամիջոցների հետ սեփական նախաձեռնությամբ հանդիպումների ժամանակ՝ իրազեկել:

3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

1) կազմել նշանակալի դեպք-իրադարձությունների, տոների ու հիշատակի օրերի աշխատանքային օրացույց,

2) հանձնարարել մարզի հանրակրթական դպրոցների տնօրեններին, առաջարկել մշակույթի բնագավառի կազմակերպությունների, մարզում գործող միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներին՝ ներկայացնել իրենց ղեկավարած կրթօջախների, կազմակերպությունների զարգացմանը նպաստող ծրագրերը, հետաքրքիր միջոցառումներն ու իրադարձությունները, ավանդույթներն ու պատմությունները, տաղանդավոր աշակերտներին ու ուսանողներին, այն ամենը, ինչի միջոցով հնարավոր կլինի համապարփակ ու ստեղծարար ներկայացնել Տավուշի մարզը:

4. ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական Ն. Գրիգորյանին՝ ապահովել կարգադրության կատարումն ըստ սահմանված կետերի:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

X

10 հունիսի 2019 թ. ք.Իջևան